տագոյնս պատուիրէր Արքայ եւ ընդ նզովիւք արկանէր զանհնազանդսն հրամանի իւրոյ, որով Թէոփանէ համարձակութեամբ տիրեաց բովանդակ այրին եւ եկեղեցւոյն Բեթղեհէմի. հալածեալ անտի զլատինս։ Զայս ամենայն քաղեցաք 'ի դատաստանական գրոց, տեսցուք արդ զբանս Ցոյն Արաբացի պատմագրի։

Ցորժամ դարձաւ Պատրիարքն Թէոփանէ յաշխարհէն Ռուսաց, եգիտ զմիաբանութիւն իւր ընկճեալ. զի 'ի բացակայութեան իւրում խստութիւնք Հայոց եւ Լատինաց զօրացեալ էին 'ի վերայ Ցունաց, և այրն Ծննդեան էր 'ի ձեռս Լատինաց. և քրիստոնէապէս միայն հրամանաւ նոցին կարէին մտանել անդ։ Ցաւուր տօնի Ծննդեան Տեառն դնաց Թէոփանէ 'ի Բեթղեհէմ. և 'ի մեծի եկեղեցւոջ կատարեաց զխորհուրդ Պատարագին. իրրեւ կամեցաւ իջանել յայրն ըստ սովորութեան՝ արգելին զնա Լատինք եւ փակեցին զդրունս ընդդէմ նորա. և ասէին թէ՝ դռնապանն գնացեալ իցէ յԵրուսաղէմ. եւ 'ի բացակայութեան նորին չէ հնար ումեք բանալ զդուռն։

Տրտմեցաւ Պատրիարքն ընդ այս, եւ թերի թողեալ զխորհուրդ Պատարագին, ել յեկեղեցւոյն և դարձաւ յԵրուսաղէմ։ Իրրեւ տեսին Լատինք թէ լուաց Պատրիարքն և ոչ ազդ արար զեղեալսն 'ի Դուռն Արքայի, համարձակեցան ախրել բովանդակ Գողգոթային. և արգելին անտի զՑոյնս, և բացին պատուհան 'ի վերուստ 'ի վերայ Պատրիարքական ախոռոյ նորին, որով եղեւ տրտմութիւն եւ ցաւ սրտին Թէոփանեայ, և այլ ոչ ևս կարաց լռել և համբերել. չոքաւ առ դատաւոր քաղաքին, և մատոյց զամենայն գրեանս առաջին թագաւորաց. և նորա ընթերցեալ զայնս, հրաման ետ երթալ տիրել Գողգոթային և այրին Ծննդեան։ Ի խլրտիլ Ցունաց, Լատինք որսացին 'ի կողմն իւրեանց զԲդեշխն Երուսաղէմի, տալով նմա բազում ինչ. եւ նա խոստացաւ առնել ըստ կամաց նոցին. և կալեալ զՊատրիարքն Ցունաց զԹէոփանէ եդ 'ի բանտի, եդեալ 'ի մտի բառնալ զնա 'ի կենաց. այլ միջնորդութեամբ դատաւորին ետան զնա 'ի բանտէն, և նորա եկեալ նստաւ 'ի տուն իւր, և ոչ կարէր ելանել արտաքս յահէ Լատինաց։ Եւ 'ի տօնի Եղիայ Մարգարէի՝ ել 'ի գիշերի գաղտ յԵրուսաղէմ,